

ուժով ու բազմաթիւ են . և մանաւանդ այն բազումները որ գետնի երեսին մօտ կը գտուին՝ աւելի ուժով են ու հաստ : Դառ տնկելու վրայ խօսելու ատեննիս արմատոց վրայ դեռ զուրցելիք ունիմք :

Կը շարունակուի :

Ժառանգորքիւն մը .

ԳԼՈՒԽ Ա .

Միւհլշդատի քաղքին Կողիւպ (Աստուածասէր) Գաւթման անունով նօտարին համար մեծ օր մըն էր . որովհետեւ Հիլտէսհայմի Սիգիսմունտ կոմսը մեռնելով հարկ էր իր բոլոր ընտանեացն առջև կտակը բանալ : Կողիւպ մաքուր հագուած այս փառաւոր հաւաքման որոշուած ժամանակին կը սպասէր : Մեռելին ազգականները կէսօրը պիտի հասնէին . մօտակայ եկեղեցւոյ մը ժամացոյցը ժամը ինն կը զարնէր , և սակայն դեռ Պ . Կողիւպ իր տեղը բռնած չէր . դահլիճէն գրասենեակը կ'երթար , և գրասենեակէն սրահը , և իբր զուարճութեան համար իր դպիրները կը կշտամբէր : Շատ մը իրեն պաշտպանեալները՝ որոնք իրենց շահուցը համար հետը խօսակցելու ժամանակը որոշած ըլլալով առտուանց իրեն ներկայացան՝ անդթութեամբ ետ ճամբուեր էին : Մտածութիւն մը միայն մտացը տիրած էր և սիրտը օրինաւոր հպարտութեամբ կը ընուր . ինքը Կողիւպ՝ Հիլտէսհայմի Սիգիսմունտ կոմսի վերջին կամացը սրբազան աւանդն ընդունել էր : Կողիւպ փայլուն աչուրններով , բաց բերնով , առժուռնկն , լեցուն և ուռած այտերով յիսուն տարեկան մարդ մըն էր : Բնութիւնը զինքն ուրախ ստեղծելով՝ մոռցած էր պաշտօնին և գործոյն յարմար զիմակն ու կերպարանքը տալու : Կարճահասակութեամբն ու գիրութեամբը հանդերձ սկիւռի պէս կայտառ էր . ծոծրակին վրայ ժողովուած և մուկի պոչին պէս երկընցած մոխրա-

գոյն մազերն կերպարանքին նորութիւնն աւելի զգալի կ'ընէին . ամեն անգամ որ կը շարժէր՝ այն պոչը մէկ ականջէն միւս ականջը կ'երկըննար , և քիչ անգամ կ'ըլլար որ Կողիւպ հայրական ձայնով խորին լռութեամբ մտիկ ըլլուելիք մուրհակ մը կարդալուն ժամանակ՝ չխնտացընէր ունկնդիրները : Վերջապէս , այս պատուական մարդը գինի խմելը շատ կը սիրէր և խմելէն ետքը սիրով կ'երգէր . որով այսպիսի զուարթ կենսութիւնը շրթունքը անջինջ ժպիտ մը ստացեր էին , որ կտակի մը ընթերցման ժամանակ կրնար բաւական ծանր նեղութիւն պատճառել : Իրեն պէս զուարթ նօտար աշխարհիս մէջ երեցած չէ : Բայց սակայն՝ ով կրնայ հաւատալ . Կողիւպ ալ հակառակորդներ ունէր . Միւհլշդատի մէջ նօտարներ պակաս չէին , և ամենքն ալ կը փափաքէին իրենց վրայ դարձընել Հիլտէսհայմի դղեակին պաշտպանութիւնը : Կոմսին մահը ամեն փառասիրութեանց ազատ ասպարէզ բացեր էր . ուստի նաև Կողիւպ ամեն ջանքն ըրած էր իր արկղին ամենէն հարուստ ադամանդը , իր պսակին ամենէն գեղեցիկ փունջը ձեռքէն չփախցընելու համար :

Առջի իրիկունէ 'ի վեր սրահին բազմոցները զիրենք ճանճերուն խորագիտութեան դէմ պաշտպանող ծածկոցէն մերկացեալ էին , և կարմրագոյն հին օթոցով ծածկուած սեղանի մը քով բոլորակի ձևով շարուած էին . որուն մօտ՝ բարձր պատուանդանի մը վրայ դրուած աթոռ մը կար , որ կարծես թէ հեռաւոր բազմութեան վրայ կ'իշխէր : Մերթնդ մերթ Կողիւպ աս առօրեայ գահուն վրայ կը նստէր , և հոն առանց ականատես մ'ունենալու ձեւերն ու մարմնոյն շարժումները կը փորձէր և անձկանօք հայելիին մէջ դէմքը կը դիտէր : Կը ջանար իր սովորական զուարթ գէմքին ցաւի և պատկառանաց տպաւորութիւն տալ . կ'ուզէր որ երեսը՝ մեռելոյն վրայ արցունք թափելով հանդերձ՝ ունկընդրաց ալ հաճոյ ըլլար : Ոչ այնչափ քաղաքավարութեան պահանջած մանրա-

մասն սովորութեանց հետեւելու դիտմամբ* որչափ իր բնական զուարթութիւնը քողարկելու համար, գլխէն մինչև ոտքը սևեր հագեր էր. մինչև նաև կօշիկներուն արծաթազօծ ճարմանդները հաներ և անոնց տեղ սևցած պողպատեայ կոճակներ դրեր էր :

Ասչափա ալ բաւական չէր. որպէս զի ժառանգորդներուն աչքը չլացնէ և իրեն պաշտպանեալներն ընէ զանոնք, մօտակայ սրահին մէջ փառաւոր նախաճաշիկ մը պատրաստեր էր. ձիւնի պէս ճերմակ սփռոցի վրայ պաճուճանօք պտուղներ, պաղ միսեր և դարուց փոշիով ծածկուած հին շիշեր շարուեր էին : Կողքիպ ամենեկին ծախքի չէր խնայած Սիգիսմունտ կոմսին յիշատակը պատուելու և իրեն ժառանգներուն փառաւոր տօնախմբութիւն մ'ընելու համար :

Հիւտէսհայմի Սիգիսմունտ կոմսը բովանդակ կենօրը դժուարաբարոյ (humoriste) ըստ Անգղիացւոց, և ըստ Գաղղիացւոց նորակերպ (original) մարդ էր : Սղեուն անշուշտ պիտի սիրէր զինքը. Հոֆֆման պէտք եղաւ որ հետը ծանօթանայ : Ասով ըսել չեմ ուզեր թէ Սիգիսմունտ կոմսը այն այլանդակ բնաւորութիւն ունեցողներէն մէկն էր՝ որոնք այլոց նման խօսք մը կամ դործ մը չեն կրնար ըսել ու ընել. և սեպենք թէ բնազդմամբ և կամ դիտմամբ ամեն դիպուածի մէջ կը ցուցնեն իրենց անխռով արտակենդրոնութիւնը. ինքը սոսկ գորովագութ սիրտ մը, ցնորակոծ միտք մըն էր. այն անուշ և տխուր բնաւորութիւն ունեցողներէն մէկը, որոնց պարզամտութիւնը բարեկիրթ մարդիկ խենդութիւն կը սեպեն : Անծանօթ ապրեր և ստուերի պէս սահեր էր :

Միակ կիրք մը կենացը վճիռը բոլորովին պիտի որոշէր : Հայտելպէրկի համալսարանին մէջ եղած ժամանակը, ամենեկին իր տարիքին մէջ սովորական եղող հաճոյիցմէ ու զուարճութիւններէն համչէր առներ. իր ուսումնակցացը ընտանեկան զբօսանքներէն կը խորչէր և առանձնութիւն կը սիրէր : Փոխանակ

իրիկունները գինետան մը մէջ քաջուելով՝ ծխելու, գարէջուր խմելու, ազգային երգեր երգելու և Եւրոպայի ամեն թագաւորութեանց վիճակին վրայ խօսելու տեղ, արևուն մտնալը դիտելու կ'երթար : Ամեն օր՝ որ և իցէ եղանակի մէջ, իրիկուան դէմ մերձակայ բլուրը կ'երթար, և երբեմն ծիրանեգոյն և ոսկեգոյն և երբեմն թխամած արևուն հորիզոնին մէջ խորասուզիլը տեսնելէն ետքը, յուշիկ քայլերով ետ կը դառնար ականջ կախելով այն շշնկոցներուն որք կը ընուն դաշտերը գիշերուան մօտ : Ահա ասոնք և ասոնց նմաններն էին իր երիտասարդութեան հանդէսներն և զբւարճութիւնները :

Իրիկուն մը երբոր տուն դառնալուն ժամանակ արուարձանէ մը կ'անցնէր, քաղցր և զուարթ ձայն մը ականջը հնչեց տան մը ստորին յարկէն : Մայիս ամիսն էր, ծաղիկներով զարդարուած պատուհանը բաց ըլլալով՝ քաղցրանքազ ներդաշնակութեան մը ոլորակները մինչև իր ականջն ալ կը հասնէին : Պարզ, սրտառուշ, ծանր և տխուր եղանակ մ'էր, նման ամենայն նախնական երգերու. այն անճառելի մաղձոտութեամբ հիւսեալ եղանակներէն մէկը՝ որոնց հեղինակները չեն ճանչցուած մանաւանդ թէ հեղինակ չեն ունեցած. յաւիտենական մեղեդիներ, արարչութեան առաջին երգերն, որոնք միայն դաշտերուն մէջ կը լսուին, և զորս յամրածայն կը գեղգեղեն հերկողները իրենց ակօսները փորելով : Սիգիսմունտ ապշած ու զմայլած կանկ առաւ. յետոյ անյազ և հետաքրքիր աչք մը տնկեց սենեկին մէջ : Աղջիկ մը նստած դաշնամուր կը զարնէր : Կանթեղի մը աղօտ լուսովը կերպարանքն որոշեց. դեղեցիկ էր :

Աս դիպուածէս ետքը Սիգիսմունտ միշտ աս պատուհանին դիմացը կանկ կ'առնէր : Ամեն իրիկուն նոյն ժամուն աղջիկը դաշնամուր կը զարնէր, կամ պատուհանին քով նստած՝ լապտերին լուսովը կ'ասղնեգործէր : Սիգիսմունտ մութին մէջ կեցած փոխ ընդ փոխ ձայնին

ու գեղեցկութեանը վրայ կը զմայլէր : Աւելորդ է ըսելը թէ ինչպիսի հնարիւք ու վարպետութեամբ կոմսը կրցաւ սե- նեակը մտնալ . գուշակելը գիւրիին է : Ա- ըուարձանի մէջ գետնայարկ մը , աղջիկ մը , դաշնամուր , ծաղիկներ , միշտ բաց պատուհան մը , նաև միշտ անցնող գացող երիտասարդ մ'ըլլալը գիտնա- լէն ետքը , հետևանքը գուշակելը գիւ- րին է :

Տանը մուտքն անպաճոյճ էր , բայց վայելուչ յաղթատուութեան իւրում : Նշին բաներու մէջ ալ մաքուր և փափուկ ա- խորժըյայտնի կ'ըլլար : Մայր մը միայն ունէր , և երբեմն մէկտեղ աւելի երջա- նիկ օրեր ունեցեր էին . հայրը պատե- ըազմի մէջ մեռած ըլլալով , տէրութիւ- նը խեղճ թոշակ մը կապեր էր : Շուայ- լութեան ու հարստութեան տեղը հո- գով խնամով ու բարեշնորհութեամբ կը լեցընէին : Միքէուհին 16 տարեկան էր , և այնպիսի խորհրդաւոր գեղեցկու- թիւն մ'ունէր , որ կանխահաս մեռնե- լու որոշեալ անձանց յատուկ նշան է : Մեծ և կապոյտ աչուրները , երկայն արտեանամբք հովանաւորեալ՝ վառ 'ի վառ կը փալթըլէին , ճառագայթումն վաղամեծիկ հոգւոյ :

Դեռ մօրը վրայ կը տեսնուէր ձեռք ու կերպերու բարեվայելութիւնը որ գեղեցկութենէն ետքն ալ կը մնայ և զերիտասարդութիւնը տարեաց որո- շեալ սահմանէն աւելի կ'երկընցնէ : Սի- գիսմոնտ որրոցին մէջ էր երբ զմայրը կորսընցուց . իսկ հայրը խիստ , վայրագ և գոռոզ ըլլալով սիրտն ամենեւին չէր յանկուցած . և տղայութեան ու համ- բակութեան հասակէն ընտանեկան միութեան զուարճութիւնն երբեք չէր վայելած : Աս երկու կանանց ընկերու- թիւնը իրեն համար ընտանիք մը կը ձևացընէր , և բիւրաւոր անտեսանելի կապերով զինքը յօժարակամ պիտի կապէր : Միքէուհին յարբունս էր ու բարենշան . Սիգիսմոնտ ալ առողջանձն ու գեղեցիկ մօր մը պահպանութեան տակ . իրենց սէրը իրարու վրայ ազատ- օրէն աճեցաւ : Եթէ նորածին կրից հա-

մար ծածկապահութիւնը քաղցր է , ան- շուշտ բարեխնամ և պաշտպանող աչք մ'ալ նոյնպէս քաղցր է : Սիրեցին զի- րար և խոստացան մէկմէկու հետ ա- մուսնանալու : Աս երկու պատանիք փո- փոխակի վստահութեամբ , և երջանկու- թեան արբեցութեան յիմարութեամբ բը՝ իրենց միութեանը ամենեւին ար- գեք չէին տեսներ : Սիրոյ մասնաւորա- պէս հաճոյական բանն է հասարակաց չըջահայեցութիւն չունենալը :

Սակայն Միքէուհոյն մայրը , որ նախ մասնակից եղեր էր իրենց ամեն յոյսե- ըուն , անկարելի էր որ տարտամ ան- հանգստութիւն մը չունենար մտածե- լով որ Սիգիսմոնտ հին ազնուական ազ- գատոհմի կը վերաբերէր . Սիգիսմոնտ 'ի զուր կը ջանար զինքը ապահովընե- լու համար : Ափսոս որ իր վախն իրա- ւացի էր :

Երբ Սիգիսմոնտ համալսարանէն ե- լաւ՝ ու յայտնեց հօրը իր խորհուրդ- ները , ասիկայ սաստիկ դէմ կեցաւ որդւոյն աղաչանացն այնպէս որ ստի- պուեցաւ ժամանակին սպասելու : Հա- կառակ կիրքերը ամենէն աւելի ահա- ւորներն են . իրարու հետ ամբօու- թեամբ կապեալ երկու սիրտերը բաժ- նել ուզելը , կրակը մարելու համար վը- րան փչելուն կը նմանի : Ամեն անգամ որ Սիգիսմոնտ ազատ օր ունենար՝ ա- ճապարանք հայտէլպէրկ կ'երթար : Ինչպիսի ուրախութիւնք և որպիսի ցաւք . Միքէուհին երբեք չէր գանգա- տեր . կը ժպտէր միշտ Սիգիսմոնտին երեսն 'ի վեր և քաղցր խօսքեր կ'ընէր . բայց ինչպէս որ բոյսեր կան որոնց ար- մատները հետզհետէ խոր իջնելով կը ճաթեցընեն իրենց բանտարգելութեան անօթը , այսպէս ալ լուութեամբ երկնող հոգիներ կան որոնք անձայն ու 'ի ծա- ծուկ կը պատռեն իրենց ծրարը :

Սիգիսմոնտի հայրը մեռաւ . յուղար- կաւորութենէն ութ օր ետքը երիտա- սարդ կոմսը Հայտէլպէրկ կը վազէր : Երբոր հասաւ՝ Միքէուհին սաստիկ հի- ւանդ էր . երեք օր ետքը վախճանեցաւ : Շատ անգամ այս դառն տառապանաց

երեք օրերուն մէջ հիւանդ աղջիկն ազաւեց Սիգիսմունտին՝ իրենց փոփոխակի սիրոյն սկզբնապատճառ եղող մեղեդին կրկնելու դաշնակին վրայ : Երկուքն ալ այս եղանակս մեծապէս կը սիրէին : Շատ անգամ իրենց երջանկագոյն օրերուն մէջ մէկտեղ զմայլմամբ՝ գոհութեամբ սրտի և երախտագիտութեամբ երգեր էին զայն . կարծես թէ զայն երգելով կ'ուզէին Աստուծոյ շնորհակալ ըլլալ, զիրենք իրարու հետ միացուցած ըլլալուն համար : Աս եղանակս Միքէուհին պզտիկութեանը ժամանակ Դիրուի լեռներուն մէջ սորված էր, և մտքին մէջ այնպէս տպաւորուած էր՝ որ երբեք ելլալիք չունէր, և տասը տարի ետքը այնպէս կը յիշէր զայն՝ իբրեւ թէ նախնիք իրիկունը լսած ըլլար : Երբ Սիգիսմունտի բաղկացըր մէջ մեռաւ, այս քաղցր մեղեդիս դեռ իր շրթանցը վրայ կը ծածանէր :

Սիգիսմունտ անհնարին ցաւ կրեց . չաբաթներով վշտաց մէջ ընկզմեցաւ . երբ սրտնեղութենէն քիչ մը սթափեցաւ, բոլոր աշխարհքս իրեն համար անապատ երևցաւ : Կ'ուզէր Միքէուհոյն մայրը դղեակը տանիլ, և կենացը մնացորդը հետն անցընել՝ Աստուծոյ իրեն քով կանչած հրեշտակին վրայ խօսելով . Միքէուհոյն մայրը հաստատապէս դէմ կեցաւ աս առաջարկութեանս . ոչ արցունք, ոչ աղաչանք բաւական չեղան զինքն համոզընելու :

— Կ'ուզեմ մեռնիլ, կ'ըսէր, ուր որ աղջիկս ապրեցաւ և մեռաւ :

Քիչ ատենէն ետքը մեռաւ . և Սիգիսմունտ աչքերը փակեց :

Իր այս վերջի պարտքն ալ կատարելով՝ Հիլտէսհայմի դղեակը քաշուեցաւ, խորին ու բացարձակ առանձնութեան մէջ ապրելով, ամենայն ճգամբ կը խոր չէր այն ամեն բանէ որ կրնար իր ցաւը փարատել : Երբ դրացի ազնուականներէն մէկուն հանդիպէր ճամբուն վրայ՝ լռութեամբ կը բարեէր և առանց խօսք մ'ըսելու կը հեռանար : Ի զուր շրջակայ դղեակներուն տէրերէն հրաւէրը հրաւէրքի վրայ կու գային . 'ի զուր

զինքն իրենց ձգելու կը ջանային հասոյթ ունեցող տիկնայք, որոնք հարսնացընելու աղջիկներ կամ քեռորդիներ ունէին . ականջ չկախելով ամենեկն այդպիսի աճապարանաց յուսահատութեանը մէջ պինդ կը կենար, և չէր ուզեր մխիթարուիլ :

Հուսկ ուրեմն երբ առաջին յուզմունքը քիչ մը դադրեցաւ՝ մտածեց թէ իբրեւ միակ սփոփանք ըլլայ իրեն և ուզեց հնչեցընել դաշնակին վրայ Միքէուհոյն երգած դիրուցի եղանակը, զոր այնչափ անգամ միաբան երգեր էին, և զոր դեռ ևս կը գեղգեղէր և 'ի վերջին պահուն : Իրեն այնպէս կ'երևար որ այս եղանակս կրկնելով՝ իր սիրելւոյն հոգին պիտի ուրախացընէր, և պիտի լսէր անոր մեղմով վայրիջեալ ու սաւառնաթիւ թեւածիլը . բայց երբ դաշնակին առջեւ անցաւ, ինչ ահաւոր զարմացումն . 'ի զուր միտքը բերել կը ջանար . եղանակը մըտքէն ելեր էր : Աղջկան հոգւոյն հետ մեղեդին թռեր էր : Շատ կերպով փորձեց յիշել զայն՝ նախ անհամբերութեամբ, յետոյ բարկութեամբ, և ուր ուրեմն կատաղութեամբ . ընդունայն ջանք . ցաւն ամենայն ինչ անհետ ըրեր էր :

Այս միշտ մոլեգին և միշտ սնավաստակ կռիւր՝ ամեն վայրկեան միտքը գրաւած էր ու կը տանջէր : Դիրու գընաց . լեռներու գագաթանց վրայ, հովիտներու խոռոչներու մէջ հովուաց երգերուն ականջ կը դնէր . բայց ոչ դր Միքէուհոյն եղանակը կ'երգէր : Զուգերին և իտալիան պտըտելէն ետքը Գերմանիա դարձաւ, և իրեն ամիս խենթութիւնընոր կերպ մ'առաւ : Խեղճ ուսումնականի մը պէս հետի կը պտըտէր, և դեղէ մը անցնելու ժամանակ եթէ առոյգ և նորոգ ձայն մը լսէր՝ կանկ կ'առնուր . քաղաքներու մէջ, հասարակաց հրապարակներու մէջ, երբոր թափառիկ երգիչներուն չորս կողմը՝ բոլորակի ձևով շարուած բազմութիւնը տեսնար, հետաքրքիրներու ամբոխին մէջ կը խառնուէր, և այսքաջ երաժիշտներուն ամեն գիտցած երգերը լսելէն ետքը կը հեռանար :

Մինչդեռ Սիգիսմունտ կոմսն ամենայն ոգևոլ այս դիրույցի եղանակս գրտնելու հետամուտ էր, որ առջևէն կը փախէր, ինչպէս իթակէն՝ Ողիսեւսի առջևէն, շատ քիչ հոգ կը տանէր իր շահուցը, զոր ամենայն ոք ղիւրաւ կըրնայ ըմբռնել: Ճամբորդութիւններն սկըսելէն առաջ՝ որոնք շատ տարիներ տեւցին, իր դղեկին մէջ ընդուններ և զետեղեր էր իր մօրը երկու քեռորդի աղջիկները. ասոնցմէ մէկուն անունն էր Իւլլրիկ և երկրորդին՝ Հէտուիկ Սդուլցէն. ֆէյս:

Ասոնք երկու պառաւ աղջիկներ էին, որոնք քաջութեամբ ամուրի կենաց դիմացեր էին. եղբորորդւոյ մը վրայ էր իրենց ամենայն հոգն ու մտածութիւնը որ ստահակի կեանք կ'անցընէր, և զիրենք կործաներ էր. բայց չէին դադրեր սիրելէն՝ ճամբու բերելու յուսով: Տասը տարիէ ՚ի վեր փրեզերիկոս իր հօրաքերցը քսակին այնչափ մնաս հասուցեր էր, որ ալ իրեն ընծայելու ուրիշ բան չունէին՝ բայց եթէ գովթ ու գորով: Առանց իմացընելու, իրեն համար ադամանդներ՝ բանուածներ և մուշտակներ ծախեր էին. և շատ չափաւոր եկամուտ մը մնացեր էր ձեռքերին, որով հազիւ հազ կ'ապրէին, և Սիգիսմունտ զիրենք ընդունելով՝ աւելի զթութեան քան թէ բարեմարդութեան գործ մ'ըրեր էր:

Մեծ փութով ընդուններ էին Սիգիսմունտին առաջարկութիւնը, որուն քով նախ պատասպարան մը գտնել կը կարծէին. բայց տեսնելով որ ցրուած ու վերացած էր մտքը և ցնորակոծ ու միանգամայն կենաց իրականութեան ամենայն հակաճառութեանցն հակառակորդ, իմացան թէ ինչ շահ կրնային քաղել անոր այնպիսի բնաւորութենէն: Աս երկու գոռոզ և վէս պառաւները՝ որոնք մինչև ան ժամանակ փրեզերիկոսի մտացածին հաճոյքը կատարելու հակեալ էին, Սիգիսմունտին հետ զիրենք խոնարհ և հեզ կեղծեցին, և իր շահուցը հսկելու պատրուակաւ՝ հետդհետէ, տանը բովանդակ գործակա-

լութեանն իշխեցին: Իրեն աւելի հանգըստութիւն և ազատութիւն տալու համար, կ'ըսէին, իր գործավարին և վարձուորներուն վճարելը վրանին առին, այնպէս որ քանի մը եօթնեակ ետքը կարծես թէ իրեն հիւրընկալութիւն կ'ընէին:

Հազիւ թէ Սիգիսմունտ կոմսը ճամբայ ելաւ, փրեզերիկոս՝ որ իբր ՚ի պահ մերձաւոր քաղաք մը կեցեր էր, դըղեակն եկաւ, և ամեն բանի սկսաւ կարգ կանոն դնել իբր թէ յատուկ իր ժառանգութիւնն ըլլար: Ձիերը, շանց խումբերը, պահապաններն՝ իր հաճոյիցն համեմատ ու պահանջմունքով հանդերձ կը գործածէր: Ծառաներն որ վարժեր էին երկու պառաւ խաթուններէն հրամաններ ընդունելու, տեսնալով որ անոնք փրեզերիկոսին կը հնազանդէին, իրենք ալ նոյնպէս կը հպատակէին:

Փրեզերիկոս՝ ձիաւորաց գնդի սպայն, վայելչագեղ երիտասարդ մ'էր և ամեն տեղ աղէկ ընդունելութիւն կրնար գրտնել: Ամենայն ոք զինքն առաջին անգամ տեսնելուն բնական զգացմամբ սիրտը հետը կը կապուէր. և նաև քանի մը ամիս մէկտեղ ապրելէն ու ճանչնալէն, և պակասութիւնները համրելէն ալ ետքը, զեռ չէր կրնար չսիրել: Անառակ վարքովն ու անհուն ծախիւքն հանդերձ՝ անանկ մէկ շնորհք մը կը փայլէր վրան՝ որ պակասութեանցն աչք գոցել կու տար: Հէտուիկ ու Իւլլրիկ զինքը կը պաշտէին. աղքատի մը համար քսակներէն և ոչ մէկ քրայցէր կը հանէին, իսկ փրեզերիկոսի համար մինչև իրենց վերջի քալերն ալ սիրով կու տային. իսկ այնչափ ըրած զոհերուն փոխարէն միայն կը փափագէին որ մերթ ընդ մերթ զինուորական աստիճանին հագուստովն իրենց այցելութեան դայ. գերագոյն երջանկութիւն էր իրենց համար զփրեզերիկոս հարիւրապետ ձիաւորի զգեստով տեսնել, և այս երջանկութիւնը ծանրագին չէին համարեր: Նաև այս ժամուս Հիլտէսհայմի տան մէջ լոկ մէկ մտածութիւն մը

տիրած էր իրենց մտացը : Սիգիսմունս-
տին դեղնեալ և վհատ դէմքը փոխա-
նակ մայրական խնամք մը զարթուցա-
նելու , փառասէր յոյսերով կը լեցընէր
սրտերնին , որոնց դաղափարը դղեակը
մտնալու ժամանակնին և ոչ մտքերնէն
կ'անցնէր : Սիգիսմունսի կենաց ընթաց-
քը դիտելով , կ'ըսէին , որ այս նորօրի-
նակ կերպով ապրիլը շարունակելով չէր
կրնար ծերութեան հասնիլ , և հազիւ
երիտասարդութիւնը պիտի անցընէր ,
և այս յարմար առթով փրեգերիկոս
շատ բախտի կրնար յուսալ , միայն թէ
Սիգիսմունս կոմսն հաճէր իր կալուած-
ներէն մէկ մասը անոր թողլու : Եւ ին-
չու համար բովանդակն իրեն պիտի
չթողու . ճշմարիտը մտածելով՝ ուրիշ
ինչ լաւագոյն անձի մը կրնայ յանձնել
ունեցած անհուն ստացուածքը :

Իսկ փրեգերիկոսին գալով , ուրախ
ապրելէն զատ ուրիշ բան չէր մտածեր ,
և ամենևին աս խորհրդոցս մասնակից
չէր ըլլար . Սիգիսմունսին գինինները կը
խմէր , ձիերը հաշմանդամ կ'ընէր , ան-
տառները կ'ամայացընէր , որսական շնե-
րը կը յոգնեցընէր , և ուրիշ բան հոգը
չէր . միայն թէ ապագան ներկային
պէս ըլլար՝ շատ գոհ կ'ըլլար : Երբ Սի-
գիսմունս քանի մը օրուան համար դղեա-
կը կը դառնար , փրեգերիկոս ամենևին
սովորական զբաղմունքներէն ետ չէր
կենար , և կոմսն ալ ամենևին զարմանք
մը չէր ցուցընէր : Կոմսը՝ իրական աշ-
խարհքէն այնպէս դուրս կը բնակէր ,
իր մտացն ուժն այնպէս մէկ կէտի մը
վրայ կենդրոնացած էր , որ հազիւ կ'ի-
մանար իր չորս կողմն հանդիպած բա-
ները :

Հէտուիկին և Իւլրիկին յոյսերը կար-
ծես թէ կատարուելու մօտ էին . Սի-
գիսմունս օր օրուան վրայ զգալի կը նի-
հարնար : Ամիսէ մը 'ի վեր դղեակն էր :
Երկու պառաւ խաթունները՝ որ զինքը
տղու մը պէս կը կառավարէին , և տի-
րաբար կ'իշխէին ինչպէս իր հեռաւո-
րութեանը նոյնպէս հոն եղած ժամա-
նակը , ալ ապահով էին առանց կռուի
և դժուարութեան ուղածնին կատարել

տալու : Բայց ինչպէս մեծ եղաւ տրտմա-
խառն վհատութիւննին երբ օր մը յան-
կարծ Սիգիսմունսին հօրը հեռաւոր ազ-
գականութենէն կնիկ մը դղեակն ե-
կաւ , որուն վրայ երկայն ժամանակէ 'ի
վեր ամենևին խօսք եղած չէր , և որ
կը կարծէին թէ 'ի լաւագոյն կեանս
անցած ըլլայ : Գուցէ աւելի պիտի չսար-
սափէին եթէ զլուխնուն կայծակ զար-
կած ըլլար : Պիլտման հազարապետը՝
որ միշտ անկարգ կեանք մը անցուցած
էր՝ խաղի մէջ իր վերջին ինչքն ալ կոր-
սընցուց . զլուխնին գալիք դժբաղդու-
թենէն ազատելու համար , իր Տորո-
թէա կնիկը պատշաճապէս մտածեց
դիմել Սիգիսմունս կոմսին : Պիլտման
խաթունը խոհեմ կնիկ մըն էր՝ և իմա-
ցած ըլլալով արդէն Սիգիսմունսին հաստա-
շիւտէս հայմի դղեակին մէջ հաստա-
տուիլը՝ արթնութեամբ փութաց հոն՝
աղուոր որս մը ձեռք ձգելու համար :
Երիտասարդ կոմսին ազնիւ սրտին ան-
սպառ վեհանձնութիւնը գիտնալով , ա-
պահով էր որ իրմէն պատասպարութիւն
ընդունի , ինչպէս որ ալ չխաբուեցաւ :
Ճամբուն վրայ մտքէն պզտիկ վիպա-
սանութիւն մը յօրինեց զոր վշտագին
ձայնով արտասանեց . Սիգիսմունս այս
վէպս ճշմարիտ պատմութիւն համարե-
ցաւ : Զգուշացաւ էրկանն անկարգու-
թիւնները պատմելու . աւանդապահ-
ներուն անհաւատարմութեանը վրայ
ձգեց ստացուածոցը փճանալը : Սիգիս-
մունսի սիրտը շարժեցաւ :

Շատ աղէկ , ըսաւ , ամեն բան լռու-
թեամբ մտիկ ընելէն ետքը , իմ երկու
մօրաքեռորդիներս դղեակին աջ կողմը
կը բնակին , դու ալ եկուր հազարապե-
տին հետ ձախ կողմը բնակելու : Ինծի
համար դեռ շատ տեղ կայ :

Տորոթէա խօսքը կրկնել չտուաւ . ութ
օր ետքը ամուսնոյն և իսահակ որդւոյն
հետ եկաւ , որ խեռ տղայ մ'էր և որուն
վրայ խօսիլը մոռցած էր :

Իւլրիկին և Հէտուիկին ապշութիւնն
'ի խուլ բարկութիւն փոխուեցաւ . ե-
րևակայեմք վայրի աղաւնի մը փետտե-
լու հետ եղող երկու կաշաղակներ , որ

կը տեսնեն թէ յանկարծ մէյմ'ալ երեք անգղ մասնակից կ'ըլլան իրենց աւարին : Իսկ փրեզերիկոս շատ հաճութեամբ պիտի խնտար եթէ Պիլտման խաթունը աւելի երիտասարդ և գեղեցիկ ըլլար :

Շատ չանցաւ, անողորքի ատելութիւն մը սկսաւ դղեակին աջ և ձախ կողմը, որոնք երկու թշնամի բանակներ եղեր էին : Սիգիսմոնտ կոմսն որ առաջուան պէս մերթ ընդ մերթ դղեակը կը քաշուէր, միտքը դրեր էր որ պքան չելի անձինքներ ունէր չորս կողմը, ազնիւ ու սիրելի հիւրեր, անձնանուէր անշահախնդիր ազգականներ, որոնք փոփոխակի մէկմէկու վրայ սէր ունենալով իր կալուածները մտադրութեամբ գեղեցկացընելու և իր առանձնակեաց կեանքը զուարթացընելու կը ջանային :

Դղեակն եղած ժամանակը երկու պառաւ խաթունները ամեն ճարտարութիւններն կը թափէին վարպետ դարձուածքներով՝ Պիլտմաններուն վրայ միտքն աւելու. Պիլտմաններն ալ նոյն պէս կ'ուզէին իրեն հասկըցընել որ Սիգիսմոնտները շատ բան չէին արժեր : Մինչդեռ իրենք սա բաներս կ'ըսէին, Սիգիսմոնտ իր դիրուցի երգը կը մտածէր, և երբ խօսքերնին կը լմնցընէին՝ շնորհակալ կ'ըլլար Հիլտէսայմի կալուածը գեղեցիկ բնակութիւն մը, առաքինութեանց սիրելի ու փոփոխակի գորովանաց օթեան մ'ընելուն համար :

Իրիկուն մ'ալ երբ Սիգիսմոնտ դղեակը եկաւ, խորհրդաւոր ուրախութիւն մը կը փայլէր ճակատն ու նայուածքը . գէպին վրայ երկնաւոր երանութիւն մը կը ցոլար : Նշանով մը ու ժպտելով չորս կողմի մարդիկը հեռացընելով, լուռ մունջ հանդարտիկ՝ գոհութեամբ լի, սենեակը փակուեցաւ : Քիչ ատենէն դաշնակին ձայնը լսուեցաւ . վերջապէս Սիգիսմոնտ վեց տարիէ՝ ի վեր փնտռած երգը գտեր էր :

Աւաղ. Սիգիսմոնտ երկայն ժամանակ իր յաղթութիւնը պիտի չկարենար վայելել : Այս լռին պայքարման ժամա-

նակ՝ իր ուժն ու զօրութիւնը հիւժեր էր : Ինչ մտաւորական բանի որ հետամուտ եղած ըլլանք, նախանձոտ բաղդը չթողուր որ հասնինք ու ձեռք ձգենք զայն :

Քիչ ետքը առաւօտանց ծառայ մը կոմսին սենեակը մտաւ : Դաշնակն ամբողջ գիշերը հնչած էր . երբեք Սիգիսմոնտ դառնալէն ետքը այսպէս խորագգաց ոլորակներ ու սրտառուչ եղանակներ չէր հնչեցուցած : Մինչև առաւօտ նոյն եղանակը լսուեր էր, երբեմն քիչ մ'ընդհատելով : Երբոր ծառան ներս մտաւ՝ Սիգիսմոնտ դեռ դաշնակին առջին էր . մթին ճերմակ ձեռքին մէկը փղոսկրեայ դաստակներուն վրայ կը հանգչէր, իսկ միւսը թուրութեամբ անշարժ մարմնոյն երկայնութեամբ կախուեր էր : Թիկնաթոռի մը կոնակը հանգչեցուցեր էր գլուխը, աչքերը դոյգ էին, բերանը կէս ժպտով մը բաց՝ կարծես թէ կը քնանար . իրաւցընէ կը քնանար, բայց այնպիսի խոր քնով որ երբեք չարթնցաւ :

Նաև յուզարկաւորութեան օրն ալ, Սիգիսմոնտները և Պիլտմանները յայտնապէս կը ցուցընէին իրենց պահանջ մունքները, և կը պատրաստուէին առանց զինադադարման անողորքի պատերազմ մը սկսելու : Սիգիսմոնտի բնաւորութիւնը ճանչալով ամենեին չէին յուսար որ կտակ թողուցած ըլլայ . ալ խնդիրն ան էր թէ արդեօք Սիգիսմոնտ ֆէլսեանք թէ Պիլտմանք երկրին տէրը պիտի ըլլային : Երկու կողմիներն ալ մտքերնին դրեր էին իրենց իրաւունքէն բանի մը չգիշանելու : Թշնամութիւնները սկսելու վրայ էին, և Միւհլշտատին հոգաբարձուները՝ որոնք բոլոր Գերմանիոյ մէջ հռչակաւոր էին իրենց բնաւորութեամբը և կռուասէր դաժանութեամբը, երբ լսեցին որ Սիգիսմոնտ մեռնելէն ամիս մը առաջ իր կտակը Պ. կողմի պին աւանդեր էր՝ ուրախութեամբ ձեռքերնին կը շրփշրփէին :

ՅՈՒՆ. ՍԱՆՏՈՑ

Կը շարունակուի :